Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հոկտեմբերի 29-ի N 1583 - Ն որոշման

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎՃԱՐԻ ԴԻՄԱՑ ԱՎԵԼԻ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ

1. Լրացուցիչ վճարի դիմաց ավելի սեղմ ժամկետում անձնագիր կամ նույնականացման քարտ տրամադրվում է սույն որոշմամբ սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հավելվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Լրացուցիչ վճարի դիմաց ավելի սեղմ ժամկետում անձնագիր կամ նույնականացման քարտ ստանալու ծառայությունից օգտվելու ցանկության դեպքում քաղաքացին պետք է նախնական էլեկտրոնային հայտի ձևավորման փուլում էլեկտրոնային միասնական հարթակում նշում կատարի լրացուցիչ վճարի դիմաց ավելի սեղմ ժամկետում անձնագիր կամ նույնականացման քարտ ստանալու ծառայությունից օգտվելու մասին:

3. Անձնագիրը կամ նույնականացման քարտը դիմողին հանձնելու համար պետք է պատրաստ լինի՝

1) Երևան քաղաքում դիմելու դեպքում՝ անձնագիր կամ նույնականացման քարտ տրամադրելու մասին լիազոր մարմնի որոշումը մասնավոր գործընկերոջը ծանուցելուց հետո 24 (քսանչորս) ժամվա ընթացքում (բացառությամբ կիրակի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային տոների կամ հիշատակի օրերի).

2) Երևան քաղաքից դուրս դիմելու դեպքում՝ անձնագիր կամ նույնականացման քարտ տրամադրելու մասին լիազոր մարմնի որոշումը մասնավոր գործընկերոջը ծանուցելուց հետո 48 (քառասունութ) ժամվա ընթացքում (բացառությամբ շաբաթ, կիրակի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային տոների կամ հիշատակի օրերի):

4. Ավելի սեղմ ժամկետում անձնագիր կամ նույնականացման քարտ ստանալու համար լրացուցիչ վճարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահի դրությամբ «Պետական տուրքի մասին» օրենքով անձը հաստատող փաստաթղթի համապատասխան տեսակի համար

սահմանված պետական տուրքի եռապատիկը: Այդ առավելագույն չափի սահմաններում լրացուցիչ վճարի չափը որոշվում է մասնավոր գործընկերոջ կողմից և ենթակա է հրապարակման լիազոր մարմնի և մասնավոր գործընկերոջ պաշտոնական կայքէջերում:

5. Ավելի սեղմ ժամկետում անձնագիր կամ նույնականացման քարտ ստանալու ծառայությունից օգտվելու համար վճարված լրացուցիչ վճարը չի երաշխավորում անձնագրի կամ նույնականացման քարտի տրամադրումը և ենթակա է վերադարձման անձնագրի կամ նույնականացման քարտի տրամադրումը լիազոր մարմնի որոշմամբ մերժվելու դեպքում: Նախնական էլեկտրոնային հայտի ստուգման արդյունքներով սահմանված ժամկետում անհրաժեշտ ուղղումները չկատարվելու կամ էլեկտրոնային միասնական հարթակով ամրագրված օրը կենսաչափական տվյալները հանձնելու նպատակով մասնավոր գործընկերոջ գրասենյակ չներկայանալու դեպքում ավելի սեղմ ժամկետում անձնագիր կամ նույնականացման քարտ ստանալու համար վճարված լրացուցիչ վճարը ենթակա է վերադարձման քաղաքացուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

30.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ